



136. ՔԱՐՈՋ

Մըջ ժամուն՝ տերտերն հողերած՝ քարող կը կարգեր վրը հոգու անմահութենին. մեկ գելներ էրկինք, մեկ գիջներ գետինք. կը մտներ դժոխք, դրախտեն գելներ դուս. նագեհան գեղացիմ՝ դստերտերի խոսք կը կտրե:

— Տե՛ր հայր, դու հոգի տեսե՞ր իս:

— Օ՛րշնած, հոգին կը տեսնվի՞:

— Ըպա ի՞նչ դինաս անմահ է:

— Ավետրան կըսե, ո՛րդի, մարդ մեռնի՝ դառնա ի հող, հոգին համբարձի էրկինք:

— Շա՛տ աղեկ կըսիս, հմա էն աշխրբեն ո՞ն դառձավ, էկա՛լ ըսեց:

— Օղո՛րդ է, մարդ չը դառձեր է, էկի, հմա թե դուզիս համոզվիս՝ արի դքրգի թաղիմ, գնա էն դիու աշխար, ետ դառձի արի, թ՛! էկար, էն վախտ թոպա կէնիմ՝ վըր անմահութենին չը խոսամ:

